սոյն 29ին, յորում Ալափայէլեան վարժարանին աշակերտացը վերջին պարգևաբաշխութիւնն եղաւ, քանի մը օր առաջ իրենց ուսմանցը մէջ քննութենէն ետքը։ Հանդիսին սկզբնաւորութենէն առաջ մեր աստուածապատիւ Աբբահայր Աբբեպիսկոպոսը սուրբ պատարագը մատոյց Ալ արժարանին մատրանը մէջ, ուր բաց՝ի Մխիթարեան Ալիսիս Միաբաններէն և աշակերտներէն, ներկայ էին նաև ուրիշ հրաւիրեալք և Ալ արժարանին արտաքին ուսուցիչքը։ Պոհութեան հոգևոր երգերէն ետքը՝ ամէնքը Ալ արժարանին մեծ սրահը ժողովուեցան, և հոն իրենց Դասատու վարդապետը ազգու և ընտիր բանախօսութիւն մը ըրաւ, ցուցընելով աշակերտաց թէ քաղաքական կենաց մէջ ինչպէս անհրաժեշտ հարկաւոր սեպուած է հիմկու ատենս դաստիարակութիւնը, և թէ ինչպէս բաղդաւոր գտնուեցան իրենք որ ազգային բիւրաւոր մանկանց մէջէն ընտրուած ձրի եկան Ալ արժարանին մեծախոհ բարերարին առատամիտ ժառանգութիւնը, և դաստիարակաց անդուլ ջանից պտուղը վայելելու. յիշեցուց իրենց թէ այն ծանր ու դժուարին երևցած տարիներուն մէջ ինչ մեծամեծ օգուտներ տեսան մտաւոր և բարոյական յառաջադիմութեան մէջ, և թէ այս աշխարհիս մէջ և թէ անդին անմահանալու ճանապարհը սորվեցան. և յորդորեց որ սորվածնին իրենց գործքերովն ալ պըտղաբեր ընելով՝ բարերարին առատաձեռն դիտմունքը և վաստակաւորաց ջանքը պակէն։

Ընտենախօսութենէն ետքը իրենց տարեկան ուսմանց ցանկը և ամէն մէկուն յառաջադիմութեան և քաջութենէ աստիճանը կարդացուեցաւ. և որովհետև սորված ուսմունքնին դժուարին և աշակերտաց ջանքը կրկնապատիկ աւելի երևցեր էր, անոր համար ամէնքն ալ առաջին մրցանակի արժանաւոր սեպուեցան։ Այս ատենք են իրենց աշակերտութեան վեցերորդ տարւոյն մէջ սորված ուսմունքները.

Ընտաղանցութիւն.
Ընտաբանութիւն.
Ջրաբաշխութիւն.
Հրահանգք հայ. իտալ. գաղ. և անգլ. լեզուաց.
Ընտլուծութիւն.
Գրահաշիւ.
Ուրուագրութիւն.
Նշրաժշտութիւն։

Աշակերտաց անուններն ալ իրենց քաջութեան աստիճանին համեմատ.

ՄԻՔԱՅԷԼ ԵՐԱՄԵԱՆ
ԱՆՏՈՆ ՓԱՄՊՈՒՂՃԵԱՆ
ԳԷՈՐԳ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ

ԹՈՎՄԱՍ ԵՍԱՅԵԱՆ
ՊՕՂՈՍ ԳԱՄԱԼԻԿԵԱՆ
ՏՐԴԱՏ ԶՕՀՐԱՊԵԱՆ
ՊՕՂՈՍ ՃԷՊԷՃԵԱՆ
ՄԻՔԱՅԷԼ ԱԶԱՐԵԱՆ
ՊՕՂՈՍ ՁԱՂՃԵԱՆ
ԳԷՈՐԳ ՍԱՄԱՆՃԵԱՆ
ՊՕՂԻԿԱՐՊՈՍ ՍԱՐԳՍԵԱՆ
ԱԲՐԱՀԱՄ ՊԻՆՍՈՆ
ՄԱՏԹԷՈՍ ՄԱՃԱՌ

Իրեք առջինները ամէն տարեկան հարցաքննութեանց մէջ բարեկրօն վարուց և ուսմանց մէջ միօրինակ գովելի գտնուելով, որով և միշտ առաջին մրցանակի արժանի ըլլալով, իրենց ջանիցը փոխարէն պսակեցան նաև դափնիէ պսակօք։

Ալիսատոռէլ Իւրոց աշակերտացն պատուիրեր, ինչս այնպիսի սատանայ, որ 'ի նաւակոծութեան և յընկղման ժամանակի լուզայ զհետա 'ի ծով։